ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը Կանանց տոնի առթիվ

-Սիրելի մայրեր, կանայք, քույրեր դուստրեր, ընդունեք իմ ջերմ շնորհավորանքները գարնանային այս գեղեցիկ ու ավանդական դարձած Կանանց տոնի՝ Մարտի ութի առթիվ:

Բոլորիս համար սրտամոտ ու հոգեհարազատ այս տոնը խորհրդանշում է Սուրբ Մայրությունը, Աստվածային սիրո ու Երկունքի հավերժությունը, քնքշությունն ու գեղեցկությունը: Իսկ մենք մեզ միշտ հոգով ուժեղ ու մարմնով առողջ ենք զգում ձեր կողքին, ձեր գուրգուրանքի, քնքշության, հոգեբուխ ժպիտների, ամուր կամքի ու արարչագործ ձգտումների մեջ, որոնց շնորհիվ է միայն անխաթար մնում հազարամյակների խորքից եկող հայ ընտանիքների, հայ ազգի հարատեւ երթը: Ավելորդ չէ նշել, որ ձեր երջանիկ ներկայությունը ոչ միայն մեր ընտանիքներում է, այլ նաեւ աշխատավայրերում՝ հայրենիքի պաշտպանության, առողջապահության, մանկավարժություն, կառավարման, սպասարկման ու այլ ոլորտներում:

Անսահման երախտագիտության զգացումով գլուխ ենք խոնարհում հայրենիքի պաշտպանության համար զոհված բոլոր հայորդիների մայրերի, կանանց, քույրերի ու դուստրերի առաջ ու ցանկանում, որ նրանք շարունակեն ապրել միայն ու միայն խաղաղ ու արարչագործ հայրենիքում, իրենց կորուստներն ամոքեն նոր ծնունդներով, նոր ձեռքբերումներով:

Մաղթում եմ բոլորիդ քաջառողջություն, երկար տարիների երջանիկ ու անհոգ կյանք, անհատնում սեր եւ լուսաշող գարուններ:

Լավագույն ցանկություններով `

ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար

Հովհաննես Հովեյան: